ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՃԸ 1940—1960 ԹԹ.

ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՍՀՄ-ում աշխատավորական դասակարգերի զարգացման ավելի քան կեսդարյա փորձը ցույց է տալիս, որ դասակարգերի, սոցիալական խմբերի և ենթախմբերի աստիճանական մերձեցման պրոցեսն ընթանում է մեր հասարակության մեջ բանվոր դասակարգի դերի բարձրացման պայմաններում։ «Բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցումը, սովետական ժողովրդի բարոյական ու քաղաքական հատկությունների դաստիարակումը, նրա սոցիալական միասնության ամրապնդումը մեզ մոտ տեղի են ունենում մարքսլենինյան գաղափարախոսության հիման վրա, որն արտահայտում է բանվոր դասակարգի սոցիալիստական շահերն ու կոմունիստական իդեալները»[1]։ Այդ պրոցեսի հիմնական ուղղություններն են դասակարգերի, սոցիալական խմբերի և ենթախմբերի ներսում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները։ Ինչպես ուսումնասիրվող ժամանակահատվածում, այնպես էլ ներկայումս, շարունակվում է բանվորների թվաքանակի ավելացման պրոցեսը, որը որոշում է որակական փոփոխությունները ոչ միայն բանվոր դասակարգի ներսում, այլև մեր հասարակության մեջ ամբողջությամբ։ Բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությունը և նրա զարգացման օրինաչափություններն անխզելիորեն կապված են տնտեսության զարգացման հիմնական տենդենցների հետ։ Բանվոր դասակարգը կարևոր դեր է կատարում ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների զարգացման, ինչպես նաև գյուղի վերափոխման գործում։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կրճատվել էր 7%-ով, չնայած այն բանին, որ ռազմական արդյունաբերության հետ կապված արդյունաբերական որոշ ճյուղերի արտադրանքը ավելացել էր մի քանի անգամ[2]։

1946 թ. հունիսին հանրապետության Գերագույն սովետի առաջին գումարման 11-րդ սեսիան հաստատեց ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման 4-րդ հնգամյա պլանը, որի համաձայն հիմնական խնդիրը լինելու էր արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնումը՝ նախապատերազմյան մակարդակին հասնելը և անցնելը։ Հանրապետության զարգացման համար նոր հնգամյակում նախատեսվում էին հսկայական կապիտալ

---

1 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 96։

2 «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1957, стр. 23, 36, 37, 41, 42, 45, 48, 51.

ներդրումներ (1 մլդ. 420 մլն. ռ.)[3]։ Արդեն 1946 թ. վերջին Հանրապետության արդյունաբերության արտադրանքը հասավ նախապատերազմյան մակարդակին, իսկ 1947 թ.՝ համախառն արտադրանքի ընդհանուր ծավալը 1940 թ. համեմատությամբ կազմեց 136,8%[4]։

Հանրապետությունում 4-րդ հնգամյակի տարիներին կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գերակատարվեց 34%-ով[5]։ Եթե ՍՍՀՄ-ում 4-րդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի աճի միջին տարեկան տեմպերը կազմեցին 73%, ապա Հայաստանում՝ 249%[6]։ Դրա շնորհիվ 1950 թ. Հայաստանը արդյունաբերական զարգացման տեմպերով ՍՍՀՄ-ում գրավեց 3-րդ տեղը, զիջելով միայն Էստոնիային և Լատվիային[7]։ Հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1950 թ. նախապատերազմյան մակարդակը գերազանցեց մոտավորապես 2,5, իսկ 1959 թ.՝ 7 անգամ։ ՀՍՍՀ արդյունաբերության բուռն զարգացման մասին է վկայում այն փաստը, որ 1913 թ. համեմատությամբ 1960 թ. մեր հանրապետությունն արդյունաբերության համախառն արտադրանքի աճի տեմպերով ՍՍՀՄ-ում գրավեց առաջին տեղը[8]։ Հանրապետության տնտեսության զարգացման մեխանիզմը հասկանալու համար պետք է ելնել ՀՍՍՀ-ին բնորոշ մի շարք առանձնահատկություններից։

Դրանցից առաջինը լեռնային տեղանքի հետևանքով գյուղատնտեսության զարգացման սահմանափակ հնարավորությունն է։ Հանրապետության գյուղատնտեսության համար պիտանի հողատարածության 90%-ն արդեն օգտագործվում է։ Հետևաբար, գյուղատնտեսությունը հանրապետությունում այսուհետև կարելի է զարգացնել «խորությամբ», այսինքն՝ ինտենսիվացման, մեքենայացման, բերքատվության բարձրացման և ագրոտեխնիկայի ու սելեկցիոն աշխատանքների բարելավման միջոցով։ Երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ մեր հանրապետությունը հարուստ է բազմաթիվ բնական օգտակար հանածոների պաշարներով, որոնք տեղական հումքի միջոցով արդյունաբերության արագ աճի հիմք են հանդիսանում։ Երրորդ կարևոր առանձնահատկությունը բնակչության արագ աճն ու բարձր խտությունն են (1939 թ. 1 կմ² վրա ապրում էր 43 մարդ, իսկ 1959 թ.՝ 59,2 մարդ)[9] և որակյալ բանվորական ու ինժեներա-տեխնիկական մասնագետների առկայությունը։ Եվ, վերջապես, հանրապետությանը բնորոշ չորրորդ առանձնահատկությունն այն է, որ նա գրեթե զուրկ է վառելիքի պաշարներից, իսկ ջրային ռեսուրսները խիստ սահմանափակ են[10]։

---

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VIII, Երևան, 1970, էջ 216։

4 «Народное хозяйство Армянской ССР», стр. 23.

5 Նույն տեղում, էջ 105։

6 Ս. Խարմանգարյան, Սովետական Հայաստանը 4-րդ հնգամյակի տարիներին, Երևան, 1960, էջ 132։

7 «Народное хозяйство СССР», М., 1956, стр. 51.

8 «СССР в цифрах в 1960 г.», М., 1961, стр. 125; «Народное хозяйство СССР в 1961 г.», М., 1962, стр. 123.

9 «Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР», М., 1963, стр. 11.

10 Հանրապետության հիդրոէներգառեսուրսները հաշվված են 24 մլդ կվ/ժամ ծավալով, որից տեխնիկապես հնարավոր է օգտագործել ընդամենը 9 մլդ կվ/ժամը։

Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները և նկատի ունենալով Հայաստանի ինդուստրացման պահանջները, 1950-ական թվականների սկզբներին պլանավորվում էր հանրապետության զարգացումը տանել նրա հիդրոտեխնիկական հնարավորությունների լայն օգտագործման ճանապարհով։ Հանրապետությունում 1950—1959 թթ. էլեկտրաէներգիայի արտադրությունն աճեց ավելի քան 2,5 անգամ[11]։ Դա խթանեց արդյունաբերության էլեկտրատար այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը և այլն։

Սակայն, էլեկտրատար ճյուղերի զարգացման պլանավորման հարցում թույլ էին տրվել լուրջ սխալներ, լրիվ հաշվի չէին առնվել հանրապետության էներգետիկ հնարավորությունները։ 1954 թ. փետրվարին ՀԿԿ XVII համագումարը դատապարտեց տնտեսության (հատկապես արդյունաբերության էլեկտրատար ճյուղերի) զարգացման պլանավորման մեջ թույլ տրված սխալները և առաջարկեց կարճ ժամկետում վերացնել դրանք, առաջին հերթին զարգացնելով արդյունաբերության ոչ էլեկտրատար ճյուղերը (մեքենաշինությունը, սարքաշինությունը և այլն)։

Եթե պայմանականորեն Հայաստանը բաժանենք 6 տնտեսական շրջանների, ապա 1960 թ. դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը հանրապետության մեջ կունենա հետևյալ տեսքը (աղյուսակ 1)[12]։

Աղյուսակ 1.

ՀՍՍՀ տնտեսական շրջանների տեսակարար կշիռը տոկոսներով (1960 թ.)

Տնտեսական շրջաններ	Տարածքը	Ազգաբնակչությունը	Քաղաքաբնակչությունը	Արդյունաբերությունը	Գյուղատնտեսությունը	Մեքենաշին., մետաղամշակումը	Էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը	Քիմիական արդյունաբերությունը
Կենտրոնական	29,4	51,4	65,3	72,8	45,2	88,7	98,3	85,1
Շիրակի	12,5	14,4	14,9	11,3	11,7	—	—	—
Լոռի-Փամբակի . . .	10,6	10,5	9,6	8,2	10,1	—	—	14,9
Հյուսիս-արևելյան . . .	9,1	5,6	2,2	2,4	9,6	—	—	—
Սևանի	13,0	9,2	1,7	1,3	12,6	—	—	—
Զանգեզուրի	24,0	8,9	6,3	4,0	10,8	—	—	—

Ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, կենտրոնական տնտեսական շրջանին բաժին է ընկնում ազգաբնակչության 51, քաղաքային բնակչության 65,3, արդյունաբերության 72,8, մեքենաշինության և մետաղամշակման 88,7, էլեկտրատեխնիկական արդյունաբերության 98,3%-ը և այլն։ Դժվար չէ նկատել, որ մինչև 1960-ական թվականների սկիզբը հանրապետության տնտեսությունը հիմնականում զարգացել է կենտրոնական տնտեսական շրջանում։ Դա բացասական ազդեցություն է գործել մյուս շրջանների զարգացման վրա։

---

11 «Народное хозяйство СССР», стр. 71; «Народное хозяйство Армянской ССР», стр. 31; «Народное хозяйство СССР в 1961 г.», стр. 215.

12 «Атлас Армянской Советской Социалистической Республики», Ереван—Москва, 1961, стр. 97—100.

Արդյունաբերական արտադրանքի աճին զուգահեռ նշված ժամանակաշրջանում ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ տեղի էր ունենում բանվորների և ծառայողների թվաքանակի, ինչպես նաև տեխնիկական և կուլտուրական մակարդակի աճ (աղյուսակ 2)[13]։

Աղյուսակ 2

Բանվորների և ծառայողների թվաքանակը ժողովրդական տնտեսության մեջ ըստ տարիների

Տարիներ	Հազար մարդ	Տարիներ	Հազար մարդ
1940	142,2	1954	291,1
1945	148,1	1955	291,1
1950	233,7	1956	310,3
1951	248,6	1957	335,8
1952	256,8	1958	361,4
1953	267,5	1959	386,4

Բանվոր դասակարգի ներսում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ պարզորոշ պատկերացում են տալիս այն տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում արդյունաբերության ճյուղային կառուցվածքում։ Բանվորների և ծառայողների միջին տարեկան թվաքանակը արդյունաբերության կարևոր ճյուղերում փոխվել է հետևյալ կերպ (աղյուսակ 3)[14]։

Աղյուսակ 3

Բանվորների և ծառայողների թվաքանակը արդյունաբերության կարևոր ճյուղերում (հազար մարդ)

	1940 թ.	1950 թ.	1960 թ.
Ժողովրդական տնտեսության մեջ . .	156	237	427
Այդ թվում՝			
Արդյունաբերության մեջ	44	81	142
Շինարարության մեջ	14	22	46
Գյուղատնտեսության մեջ	7	14	37
Տրանսպորտում	13	15	34
Կապի մեջ	2	3	5

Արդյունաբերության, շինարարության և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներին որակյալ կադրերով ապահովելու համար 1940 թ. ստեղծվեց պրոֆտեխնիկական կրթության ուսումնարանների և դպրոցների ցանց (արհեստագործական ուսումնարաններ, ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներ), իսկ ավելի ուշ՝ այլ ուսումնական հաստատություններ[15]։

---

13 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 157.

14 «Труд в Армянской ССР», Ереван, 1970, стр. 157.

15 Նույն տեղում, էջ 183։

Աղյուսակ 4.[16]

Պրոֆտեխնիկական կրթության ուսումնարանների, դպրոցների և սովորողների թվաքանակը (առ 1 հունվարի)

Տարի	Ուսումն. և դպրոցների քանակը	Սովորողների քանակը (հազար մարդ)	Տարի	Ուսումն. և դպրոցների քանակը	Սովորողների քանակը (հազար մարդ)
1950	9	1,9	1955	13	2,4
1951	12	2,0	1956	12	2,5
1952	9	1,8	1957	12	2,8
1953	10	2,8	1958	14	3,4
1954	13	2,5	1959	12	3,1

Անհրաժեշտ է նշել, որ 5-րդ հնգամյակի տարիներին որակյալ բանվորական կադրերի պատրաստման տեմպերը սկսեցին նվազել։ Հանրապետության պրոֆտեխնիկական կրթության ուսումնարաններում և դպրոցներում 1950 թ. արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի համար պատրաստվեցին 1,8, 1951 թ.՝ 1,2, 1952 թ.՝ 1,0, 1953 թ.՝ 1,0, 1954 թ.՝ 2,4, իսկ 1955 թ.՝ 1,7 հազար բանվորներ[17]։

Այդպիսի տենդենց նկատվում էր ոչ միայն ՀՍՍՀ-ում, այլև ընդհանրապես ՍՍՀՄ-ում՝ կապված արդյունաբերական մի շարք ճյուղերի արտադրանքի նվազման հետ[18]։

ՍՍՀՄ-ում և, մասնավորապես, ՀՍՍՀ-ում արդյունաբերության զարգացման բնագավառում թույլ էին տրվել լուրջ սխալներ։ Ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թ. հուլիսյան պլենումը, արդյունաբերության կազմակերպման և գործառնության հարցում առկա էին էական թերություններ։ Արդյունաբերության կառավարման չափից դուրս կենտրոնացումը և արտադրության աճի մեջ նյութական խթանների դերի թերագնահատումը հանգեցրել էին այն բանին, որ արտադրության աճի իրական հնարավորություններն անբավարար էին օգտագործվում, որոշ արդյունաբերական ձեռնարկություններում տեխնիկայի զարգացումը գտնվում էր ցածր մակարդակի վրա, գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումները չէին ներդրվում արտադրության մեջ։

ՀՍՍՀ-ում արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացման մեջ տեղ գտած թերությունները վեր հանվեցին 1955 թ. հունիսի 27-ի կուսակցական ակտիվի ժողովում, որտեղ նշվեց, որ արդյունաբերության որոշ ճյուղերում արդյունաբերական արտադրանքը նկատելիորեն նվազել է։ Այս հանգամանքը, սենկասկած, ազդել է բանվորական կադրերի պատրաստման վրա։

1950-ական թվականների երկրորդ կեսը, ինչպես Միության, այնպես էլ մեր հանրապետության համար նշանավորվեց տնտեսական նոր վերելքով։ Դրան նպաստեց նաև գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների ներդրումը ժողովրդական տնտեսության մեջ և նրա հիմնական ուղղությունների որոշումը։ Դրանում մեծ դեր կատարեց ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թ. հունիսյան

16 «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», Ереван, 1964, стр. 183.

17 Նույն տեղում։

18 «Народное хозяйство Армянской ССР», стр. 21.

պլենումը[19]։ Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի աճի տեմպերը 1940 թ. համեմատությամբ հանրապետությունում 1956 թ. կազմեցին 520%, իսկ արդյունաբերական արտադրական անձնակազմն աճեց 202%-ով[20]։

1950-ական թվականների վերջերին արտադրության մեջ սկսեցին ավելի ինտենսիվ ներդրվել գիտության և տեխնիկայի նվաճումները, որով բարձրացվեց աշխատանքի արտադրողականությունը։ Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի 1959 թ. հունիսյան և 1960 թ. հուլիսյան պլենումների որոշումները, հանրապետության կուսակցական կազմակերպությունները հիմնական ուշադրությունը նվիրեցին տեխնիկական առաջընթացի հարցերին։ Դրա շնորհիվ գիտնականները, մասնագետները և առաջավոր բանվորները մեծ աշխատանք կատարեցին արտադրության ավտոմատացման, մեքենայացման և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման գիտական կազմակերպման ուղղությամբ։ Այս բոլորը նպաստեց արտադրության տեխնիկական մակարդակի ու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և հնարավորություն տվեց 1959—1960 թթ. տնտեսելու տարեկան 8,4 մլն. ռուբ.[21]։

Նոր տեխնիկայի ներդրումը և աշխատանքի գիտական կազմակերպումն ուղեկցվում էին արդյունաբերության զարգացման սկզբնական շրջանին հատուկ որոշ մասնագիտությունների դերի նվազումով։ Այսպես, օրինակ, եթե 1939 թ. Հայաստանում կային 259 հորատողներ (հանքագործ բանվորներ), ապա 1959 թ.՝ ընդամենը 56։ Հանրապետությունում 1939 թ. կային 279 սայլակորդ-սայլապան բանվորներ, թափքագործներ և փայտամշակողներ, իսկ 1959 թ.՝ 61 մարդ։ Նվազել էր նաև դարբինների, դամորդների, հնոցապանների թիվը[22]։

ՍՄԿԿ XXI համագումարը նշանավորեց սովետական ժողովրդի անցումը սովետական հասարակության զարգացման պատմական նոր շրջափուլին՝ զարգացած սոցիալիզմին։ «60-ական թվականների սկզբին,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— սովետական ժողովուրդը մոտեցավ նոր բնագծի՝ ձեռնամուխ եղավ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցմանը»[23]։

Այդ ժամանակաշրջանի հիմնական խնդիրներն են՝ 1. ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա, 2. զարգացնել և կատարելագործել սոցիալիստական արտադրական հարաբերությունները, 3. սովետական մարդկանց դաստիարակել կոմունիզմի ոգով։

Արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը նպաստեցին, որպեսզի 1959 թ. մեր հանրապետությունն ունենա այդ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ։ Հանրապետությունում 1940 թ. համեմատությամբ 1959 թ. արտադրվեց 129 անգամ ավելի հանքային պարարտանյութ, 8,4 անգամ ավելի աղաթթու, 9,1 անգամ ավելի կաուստիկ սոդա և 3,9 անգամ ավելի ցեմենտ[24]։

---

19 «Вопросы истории КПСС», 1975, № 8, стр. 118.

20 «Народное хозяйство Армянской ССР», стр. 23 (արտադրա-արդյունաբերական անձնակազմի տոկոսային աճը հաշվված է մեր կողմից)։

21 «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի Կոմպարտիայի XXII համագումարին», Երևան, 1961, էջ 19։

22 «Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР», стр. 81—84.

23 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 183։

24 «Советская Армения за 40 лет», стр. 66.

1950-ական թվականների վերջին շարունակվում էր արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը և ընդլայնումը ոչ միայն Երևանում, այլև հանրապետության մյուս քաղաքներում ու շրջաններում[25]։

Այդ խնդիրները որոշվում էին տնտեսության տրակական նոր պահանջով՝ աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին և առանց աշխատավորների թվաքանակի զգալի ավելացման ապահովել արտադրության ծավալի աճը։

1950-ական թվականների վերջերին հանրապետությունում լայն զարգացում ստացավ ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը՝ գունավոր մետալուրգիան։ Ալավերդու պղնձաքիմիական, Քաջարանի պղնձամոլիբդենային և Ղտփանի պղնձահանքային կոմբինատներում մեծ աշխատանք կատարվեց գիտության և տեխնիկայի նվաճումներն արտադրության մեջ ներդնելու և վերջինիս ընդարձակման ուղղությամբ։

Բարձր տեմպերով էր զարգանում նաև հանրապետության քիմիական արդյունաբերությունը։ Կատարելագործվում էր սինթետիկ նյութերի արտադրությունը։ Քիմիական արդյունաբերության կենտրոնը դարձավ Կիրովականը։

Արդյունաբերության համեմատաբար նոր ճյուղ էր մեքենաշինությունը։ Եթե 1950 թ. այդ ճյուղում աշխատում էր 11,6 հազար, ապա 1958 թ.՝ 18,5 հազար բանվոր։ Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1958 թ. աճեց 31,35 անգամ[26], իսկ 1961 թ., 1958 թ. համեմատությամբ, այն ավելացավ 2,1 անգամ, այդ թվում՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը՝ 2, հաստոցաշինությունը՝ 2,5, սարքաշինությունը՝ 2,4 անգամ[27]։

Մեծ աշխատանք կատարվեց էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը կենտրոնից հանրապետության այլ շրջաններ տեղափոխելու ուղղությամբ։ Եթե մինչև 1960 թ. սկիզբը արդյունաբերության այդ ճյուղը զարգանում էր հիմնականում Երևանում, ապա 1960-ական թվականներից՝ Լենինականում, Մարալիկում, Արթիկում, Սպիտակում, Կամոյում, Ապարանում, Աբովյանում և այլուր։ Արդյունաբերության զարգացման հիմնական բազան, ինչպես նշվեց վերևում, էժան հիդրոէլեկտրաէներգիան էր, որի արտադրությունը հիմնականում կատարվում էր Սևանա լճի հաշվին։ Սակայն դա հանգեցրեց լճի մակարդակի իջեցմանը և մակերեսի կրճատմանը։ ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը հանրապետության էներգետիկ աճող պահանջները բավարարելու համար մեծ աշխատանք կատարեցին։ Առաջին հերթին մշակվեցին ծրագրեր ջրային այլ աղբյուրներ օգտագործելու համար։ Բացի այդ, նախատեսվում էր ջերմաէլեկտրակայանների շինարարություն, արհեստական ջրային մակերեսների ստեղծում և ոռոգման ցանցի ընդլայնում։ Ապա միջոցներ ձեռնարկվեցին Սևանա լիճը փրկելու համար։ 1961 թ. օգոստոսի 12-ին

---

25 «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարին», էջ 12։

26 Բ. Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953—1966 թթ.), Երևան, 1970, էջ 50։

27 «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարին», էջ 14։

ընդունվեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը՝ «Արփա գետի շրերի մի մասը Սևանա լիճ շուռ տալու մասին»[28]։

Ինչպես ցույց տրվեց վերևում, ուսումնասիրվող ժամանակահատվածում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ տեղի էին ունենում մեծ փոփոխություններ, որոնք ուղեկցվում էին ոչ միայն արդյունաբերական արտադրանքի, այլև բանվոր-ծառայողների թվաքանակի ավելացմամբ։ 1940 թ. համեմատությամբ բանվորների և ծառայողների թվաքանակի աճի տեմպերը 1950 թ. կազմել են 181, 1955 թ.՝ 198, 1960 թ.՝ 274%։ 1922 թ. համեմատությամբ 1928 թ. աճի տեմպերը կազմել են 205, իսկ 1940 թ.՝ 519%[29]։

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում հանրապետությունում դիտվել են բանվոր-ծառայողների թվաքանակի աճի բարձր տեմպեր, որոնք, սակայն, նկատելիորեն (մոտավորապես 2 անգամ) զիջում էին նախորդ ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշները։ Դա բացատրվում է նրանով, որ 1922 թ. բանվոր-ծառայողների թվաքանակը տնտեսության մեջ եղել է 30 հազար մարդ[30], իսկ 1940 թ.՝ 156 հազար։ 1960 թ. ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների թվաքանակը կազմել է 427 հազար մարդ, բայց աճի տեմպերը նվազել են[31]։ Այսպիսով, բանվոր-ծառայողների թվաքանակի աճի տեմպերը ամեն մի հաջորդ ժամանակահատվածում ցածր են նախորդից և դիտվում է բանվորների և ծառայողների թվաքանակի որոշակի ավելացում նախորդի համեմատությամբ։

Բանվորների և ծառայողների թվաքանակի ավելացման հետ մեծ փոփոխություններ են տեղի ունենում բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքում։ Այսպիսին է բանվորների տեղաբաշխումը արդյունաբերության կարևոր ճյուղերում (աղյուսակ 5, տոկոսներով)[32]։

Աղյուսակ 5

	1940 թ.	1945 թ.	1950 թ.	1955 թ.	1958 թ.	1959 թ.
1	2	3	4	5	6	7
Ամբողջ արդյունաբերության մեջ	100	100	100	100	100	100
Այդ թվում՝						
Էներգետիկայի արտադրության մեջ	1,7	2,0	1,3	1,4	1,2	1,3
Մեքենաշինության և մետաղամշակման մեջ .	8,3	12,0	15,3	17,7	18,5	20,0
Անտառային, թղթի և փայտամշակման արդյունաբերության մեջ . . .	6,4	4,5	8,1	6,7	5,8	6,5

28 «Սովետական Հայաստան», 4. X. 1961։

29 «Армения в единой семье народов СССР», Ереван, 1972, стр. 183.

30 Այստեղ հաշվի է առնված նաև գյուղատնտեսության մեջ աշխատողների թիվը։

31 «Армения в единой семье народов СССР», стр. 182.

32 «Промышленность Армянской ССР», Ереван, 1964, стр. 55; «Советская Армения за 40 лет», стр. 61.

1	2	3	4	5	6	7
Շինանյութերի արդյունաբերության մեջ	7,0	4,1	11,7	10,7	11,9	10,8
Թեթև արդյունաբերության մեջ	40,9	43,6	32,8	35,9	36,3	33,6
Սննդի արդյունաբերության մեջ	17,5	16,2	13,5	11,2	11,1	10,2
Ապակու, ճենապակու, հախճապակու արդյունաբերության մեջ . . .	0,3	0,2	0,4	0,5	0,6	0,5

Ըստ վիճակագրական տվյալների, 1940—1950 թթ. դիտվել է բանվորների թվաքանակի ավելացում հանրապետության արդյունաբերության երիտասարդ ճյուղերից մեկում՝ մեքենաշինության մեջ։ Այստեղ բանվորները 1940 թ. կազմել են ամբողջ արդյունաբերական բանվորների 8,3, իսկ 1959 թ.՝ 20,0%-ը։ Բանվորների թվաքանակի որոշ ավելացում է դիտվել նաև շինանյութերի արդյունաբերության մեջ։ Տեխնիկայի լայն ներդրումը, արտադրական պրոցեսների մեքենայացումը և դրանց հետևանք հանդիսացող աշխատանքի արտադրողականության բարձրացումը թույլ են տվել ուսումնասիրվող ժամանակահատվածում իջեցնել թեթև արդյունաբերության (40,9%-ից մինչև 33,6%) և սննդի արդյունաբերության մեջ (17,5%-ից մինչև 10,2%) աշխատող բանվորների տեսակարար կշիռը։ Այս ճյուղերում 1940 թ. ֆաստորեն աշխատում էր հանրապետության բանվորների 58,4%-ը։ Բացի այդ, բերված փաստերը վկայում են, որ 1959 թ. թեթև և սննդի արդյունաբերության մեջ զբաղված բանվորների տեսակարար կշիռը 14,6%-ով կրճատվել էր և կազմում էր ամբողջ արդյունաբերական բանվորների թվաքանակի 43,8%-ը։

Թեթև և սննդի արդյունաբերության բանվորների թվաքանակի այդպիսի բարձր տեսակարար կշիռը բացատրվում էր աշխատանքի ցածր արտադրողականությամբ և ձեռքի աշխատանքի լայն կիրառմամբ։

Հանրապետության արդյունաբերության զարգացման և ընդլայնման հետևանքով նշված ժամանակահատվածում տեղի էին ունենում արտադրա-արդյունաբերական անձնակազմի կառուցվածքի մեծ փոփոխություններ (աղյուսակ 6)[33]։

Աղյուսակ 6

Բանվորների տեսակարար կշիռը արտադրա-արդյունաբերական անձնակազմի մեջ արդյունաբերության մի շարք ճյուղերում

	1940 թ.	1950 թ.	1955 թ.	1957 թ.	1958 թ.	1959 թ.
1	2	3	4	5	6	7
Արտադրա-արդյունաբերական անձնակազմը . .	34458	69066	98305	110632	115029	119219
Այդ թվում՝ Բանվորներ	23774	53293	79152	89335	93203	97053

[33] «Советская Армения за 40 лет», стр. 70.

1	2	3	4	5	6	7
Ինժեներա-տեխնիկական անձնակազմ (ԻՏԱ)	3160	5664	8310	8923	9461	10042
Ծառայողներ	3492	4061	4835	5344	5499	6562
Տոկոսը ընդհանուրի նկատմամբ՝						
Արտադրա-արդյունաբերական անձնակազմ	100	100	100	100	100	100
Բանվորներ	69,0	77,2	80,5	80,7	81,0	81,4
ԻՏԱ	9,2	8,2	8,4	8,1	8,2	8,4
Ծառայողներ	14,7	6,9	4,9	4,8	4,8	4,7

Փաստորեն բանվորների թվաքանակը 1940—1959 թթ. աննախընթաց աճել է, որի հետևանքով ավելացել է նրանց տեսակարար կշիռը արդյունաբերության մեջ։ Այդ նույն ժամանակ ծառայողների տեսակարար կշիռն աստիճանաբար նվազել է, իսկ թվաքանակը՝ բացարձակապես աճել։ Բերված տվյալները պատկերացում են տալիս բանվորների, ինժեներա-տեխնիկական անձնակազմի և ծառայողների թվային հարաբերության մասին։ Հետաքրքիր է հետևել, թե ըստ արդյունաբերության ճյուղերի ինչպես է փոփոխվել բանվորների տեսակարար կշիռը արդյունաբերական անձնակազմի ընդհանուր թվաքանակում (աղյուսակ 7)[34]։

Աղյուսակ 7

Բանվորների տեսակարար կշիռը արտադրա-արդյունաբերական անձնակազմի մեջ արդյունաբերության որոշ ճյուղերում (արտադրա-արդյունաբերական անձնակազմը=100)

	1950 թ.	1955 թ.	1958 թ.	1960 թ.
Ամբողջ արդյունաբերության մեջ	74,9	80,5	81,0	82,5
Այդ թվում՝				
Գունավոր մետալուրգիայում	76,5	78,8	79,5	80,9
Էլեկտրաէներգիայի արդյունաբերության մեջ	62,8	64,8	67,4	66,5
Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության մեջ	69,7	78,7	79,0	80,5
Քիմիական արդյունաբերության մեջ	70,0	76,3	76,3	77,3
Շինանյութերի արդյունաբերության մեջ	82,2	89,5	88,8	88,5
Թեթև արդյունաբերության մեջ	80,4	83,6	84,1	85,9
Սննդի արդյունաբերության մեջ	72,2	77,3	76,7	78,0

Բերված փաստերը վկայում են, որ 1950-ական թվականների ընթացքում արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում դիտվել է բանվորների տեսակարար կշռի ավելացում, որն արտահայտվում է բացարձակ և տոկոսային հարաբերությամբ։

34 «Промышленность Армянской ССР», стр. 57.

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՍՍՀ-ում դիտվել է բանվոր դասակարգի թվաքանակի բուռն աճ։ Աննախընթաց կերպով ավելացել է բանվորների տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Բանվոր դասակարգի աճի տեմպերը, կախված նրա թվաքանակի ավելացման հետ, սկսել են նվազել։ Ամեն մի հաջորդող ժամանակահատվածում բացարձակ նշանակությամբ աճել է ինժեներա-տեխնիկական անձնակազմի թվաքանակը (ծառայողների թվաքանակը ավելացել է համեմատաբար ավելի քիչ), իսկ տոկոսային արտահայտությամբ իջել է։

ОСНОВНЫЕ ЧЕРТЫ ИНДУСТРИАЛЬНОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ И РОСТ РАБОЧЕГО КЛАССА 1940—1960 гг.

МИКАЕЛ ГРИГОРЯН

Резюме

В период упрочения и развития советского общества неуклонно рос экономический потенциал Советской Армении. Происходили коренные изменения в составе рабочего класса республики, увеличивалась численность рабочих, повышался их культурно-технический уровень. Темпы роста рабочего класса с увеличением его численности стали снижаться и в каждый последующий период были ниже, чем в предыдущий. Темпы роста рабочих в Арм. ССР за исследуемый период были намного выше, чем в СССР в среднем, а снижение темпов, которое происходило в каждый последующий период, было сравнительно медленным.